

## ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԶՆԱՐԻ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԱՅԻՆ ՇԵՐՏԵՐԸ

Ա. Ա. ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ

Այսօր՝ արցախյան հերոսամարտով ծնունդ առած ազգային-ազատագրական շարժման սկզբից ավելի քան մեկ տասնամյակ անց, միանգամայն հնարավոր է սթափ գնահատական տալ հայ հասարակական-քաղաքական մտքի այն ձեռքբերումներին, որոնք նախապատրաստեցին ու հիմք դարձան համաժողովրդական մոր ընդվզումի հզոր վերելքին: ԽՍՀՄ-ում և աշխարհում տեղի ունեցած քաղաքական տեղաշարժերի ու դրանց՝ հայ իրականության վրա ունեցած ազդեցությունների հարցերը թողնելով հասարակագետների և պատմաբանների քննությանը՝ նշենք միայն, որ այդ ընդհանուր պայմանները լոկ հարմար առիթ էին հայ ժողովրդի համար՝ մղվելու դեպի ազգային-ազատագրական պայքար, որին նա պատրաստ էր նախ և առաջ տասնամյակների ընթացքում իր ներսում կուտակած լիցքերի շնորհիվ: Այդ լիցքերի հիմնական աղբյուրն էին՝ ցեղի հազարամյա պատմությունը՝ իր հերոսական էջերով, դարասկզբի ողբերգական իրադարձությունների հետևանքով Արևմտյան Հայաստանի և հայկական այլ տարածքների կորստի հետ չհամակերպվող ազգային ոգին, և, իհարկե, առաջին հերթին, հայ գրականությունը: Գրականությունը, որովհետև նրա արտահայտչաձևերը՝ համեմատությունը, փոխաբերությունը, այլաբանությունը և այլն, հնարավորություն են տալիս արվեստագետներին մանևերելու, տարբեր ճանապարհներով ընթերցողին հասցնելու այն մտքերը, որոնք ուղղակիորեն արտահայտելն արգելված էր ու վտանգավոր: 60—80-ական թթ. հայ գրականության կենտրոնական դեմքերից շատերը չապրեցին մինչև համազգային զարթոնքի օրերը (Հ. Շիրազ, Պ. Սևակ, Խ. Դաշտենց, Մ. Գալշոյան և ուրիշներ):

Գրական այդ սերունդը մեծ մասամբ ստալինյան, խրուշչովյան, բրեժնևյան, ումանք մասամբ նաև գորբաչովյան բարդ ու իրարամերժ տարիներին, ապրելով բազմաթիվ տատանումներ, կրելով ժամանակի գրական ու քաղաքական մտքի տարբեր ազդեցությունները, այնուամենայնիվ կարողացավ գտնել հայ գրողի առաքելության ճշմարիտ ուղին, և յուրաքանչյուրը, յուրովի անցնելով այդ ուղին, դարձավ իր ժողովրդի հավաքական իդեերի կրողն ու դրանց իրականացման ուղեցույցը:

Թվում է՝ վերը նշված տատանումները ամենից քիչ պետք է վերաբերեն Հ. Շիրազին, որովհետև կարծես ի սկզբանե նրա հայրենասիրությունը, «արարատապաշտությունը» և պահանջատիրությունը ակնհայտ ու գրեթե մերկապարանոց արտացոլված են իր երկերում: Սակայն նույնիսկ Շիրազի ստեղծագործության մեջ վերոհիշյալ գաղափարների արժարժումը խիստ որոշակի շերտեր ունի՝ կապված տասնամյակների հասարակական-քաղաքական տեղաշարժերի և իհարկե՝ քանաստեղծի աշխարհայացքի աստիճանական զարգացման հետ:

30-ական թթ. ասպարեզ իջած շատ գրողների պես Շիրազը ևս գրական մուտքի տարիներին գովերգում է նոր՝ սոցիալիստական կյանքը՝ իր բոլոր «կոլխոզագործարանային» հրաշապատումներով, լենինյան և ստալինյան երջանիկ ներկայով ու ապագայով: Այսպես էին սկսում գրեթե բոլորը, այսպես շարունակվեց շատ-

շատերի գրական կյանքը: Արհեստականորեն պարտադրված գաղափարախոսության մատուցումն այնքան լայնածավալ էր, որ ականա դառնում էր միակ ընդունելին՝ երբեմն վերածվելով նաև անկեղծ հավատի: Եվ բնածին տաղանդը դեռևս բավարար հիմք չէր՝ թոթափելու կամ գոնե կասկածի տակ առնելու այդ համընդհանուրն ու ընդունելին: Դրա համար միայն բանաստեղծ լինելը քիչ էր, պետք էր լինել նաև քննող, պեղող ու վերլուծող, իսկ հայ իրականության պարագայում նաև արյան կանչով դեպի սեփական պատմության ու մշակույթի ակունքները խորասուզվող, այդ ակունքներից լիարուտ սնվող բանաստեղծ: Հ. Շիրազը հենց այդպիսին էր:

Իր նշանավոր «Միամանթո և Խջեզարե» պոեմով տակավին քսան տարեկանում Շիրազն արդեն հայ գրական աշխարհի նշանավոր դեմքերից էր, որի երկերը բարձր էին գնահատում ոչ միայն ժողովուրդը, այլև ժամանակի իսկական արվեստագետները, հատկապես երիտասարդ բանաստեղծին հայրաքար հովանավորող Ավ. Իսահակյանը: Պոեմի տպագիր առաջին տարբերակում տիրապետողը զուտ սիրո թեման է: Բայց 50-ական թթ. վերահրատարակություններում, նախորդ շրջանում լույս տեսած շատ երկերի նման, այն արդեն ենթարկված է էական փոփոխությունների:

Դժվար չէ նկատել, որ պոեմի նոր հրապարակումներում սիրո թեմային զուգահեռ ի սկզբանե առկա է նաև հայրենապատումը, որն աստիճանաբար դառնալու էր Շիրազի քնարերգության գերթեման: Հենց սրանով էլ «Միամանթո և Խջեզարեն» էապես տարբերվում է ուրիշ բանաստեղծների՝ սիրային թեմաներով մինչ այդ գրած պոեմներից: Ասվածը հիմնավորենք՝ փորձելով զուգահեռ տանել Հովհաննես Թումանյանի «Անուշ» պոեմի հետ, որի ազդեցությունն, անշուշտ, նկատելի է Շիրազի այս երկում:

Այսպես, Թումանյանի պոեմում գործողությունները ծավալվում են հեղինակի հայրենի լեռնաշխարհում՝ Լոռվա սարերում: Մինչդեռ Շիրազի պոեմում պատկերված է Արևմտյան Հայաստանի բնաշխարհը, ավելի կոնկրետ՝ Վանա լճի շրջակայքը: Ու թեև պոետի ներկայանակը հարուստ է ու պատկերավոր, բայց հայտնի է, որ Շիրազը սեփական աչքերով չի տեսել այդ բնաշխարհը: Թվում է՝ կարելի է հատուկ չարժեքավորել այս հանգամանքը, որովհետև բանաստեղծը մշակել է ժողովրդական մի սիրավեպ, որի գործողությունների տարածքը պարզապես Վասպուրական աշխարհն է: Սակայն պոեմի առաջին տողերից զգացվում է բանաստեղծի կարոտը՝ կորուսյալ հայրենիքի, նրա սրբազան լեռների, ձորերի ու դաշտերի հանդեպ, և նա աշխատում է այդ կարոտը անշեջ պահել նաև ընթերցողի հոգում:

*Բայց դե եկեք, ո՛վ աղջիկներ, եկեք Միփան ձեզ տանեմ,  
Գեթ երգի մեջ\* աստվածային սիրո ճամփան ձեզ հանեմ:  
Ում սրտի մեջ դեռ դատարկ է սիրո սափորն հայրենի՝  
Եկեք տանեմ ձեզ Վանա ծով, որ արցունքն է Միփանի:*

Իսկ մինչ այդ՝

*Ուր որ ջահել մի հայ հովիվ և քուրդ աղջիկ մի սիրում  
Երազներով իրար գտան մեր Միփանա սարերում:*

Թվում է՝ ամեն ինչ ընթանում է թումանյանական արվեստի ավանդույթներով. ասես այս տողերը «Անուշի» նախերգանքի մի անհայտ տարբերակը լինեն:

Սակայն, հարազատությամբ հանդերձ, Շիրազի պոեմը միանգամայն այլ բովանդակություն ունի: Ընդգծված բառերն ու բառակապակցությունները հենց դրա ապացույցն են: Պատահական չէ, որ Շիրազը հայ աղջիկներին աստվածային սի-

\* Այս և հետագա ընդգծումները իմն են (Ա. Տ-Մ):

րո ճամփան խոստանում է տանել **գեք երգի մեջ**: Այստեղ սեփական ցավն ու կարոտն է՝ այդ աստվածային եզերքի հանդեպ: Բանաստեղծի համար ասես ոչինչ աշխարհում գոյություն չունի հայրենիքից բաժան՝ ո՛չ սեր, ո՛չ երջանկություն, ո՛չ վիշտ: Եվ արդեն առաջին իսկ տողերում սիրո սափորը, որ խոստանում է աղջիկներին, սերտ միաձուլված է հայրենի բառի հետ՝ **սիրո սափորն հայրենի...**: Հետագա տարիներին ևս տարբեր երկերում Շիրազը Վանա լիճը անվանելու է Միփանի, իսկ երբեմն էլ հայ ժողովրդի արցունքը: Սա ևս պատահական պատկեր չէ, այլ Վանա լճի, ինչպես և ողջ Արևմտյան Հայաստանի գերված լինելու գաղափարն ընդգծելու յուրօրինակ ձև, որն առաջին անգամ օգտագործվում է «Միամանթո և Խջեզարե» պոեմում. «Եկե՛ք տանեն ձեզ Վանա ծով, որն արցունքն է Միփանի»:

Պատահական չէ նաև **մեր Միփանա սարերում** բառակապակցության ընտրությունը, որով արծարծվում է հայ ժողովրդի՝ իր կորսված հայրենիքի (թեև առայժմ միայն հոգևոր) պահանջատիրության գաղափարը: Հայ հովիվը՝ Միամանթոն, անմեղ սիրո համար բռնի վտարվելով հարազատ եզերքից, հրաժեշտի երգում արտի ցավն ու մորմոռը կիսում է **հայր Միփանի և մայր Վանա ծովի** հետ.

*Մնաք բարով իմ հայր Միփան  
Եվ դու իմ մայր Վանա ծով,  
Ուր էլ գնամ ձեզ հավիտյան  
Չեմ մոռանա իմ լացով:*

Ավելին, Շիրազի հերոսն ընդամենը սիրահար պատանի չէ, այլ հա՛յ պատանի, հա՛յ կտրիճ, որը երդվում է վերադառնալ ու տեր կանգնել և՛ իր սիրեցյալին, և՛ իր հայրենիքին:

*Մնաս բարով և դու՝ իմ սեր,  
Բայց թող հայրդ իմանա,  
Ուր էլ գնամ, ես կգամ դեռ,  
Քաջն անմուրազ չի մնա:*

Խոսքը մեջբերումներով չծանրաբեռնելու համար փաստենք միայն, որ վերը նշված միտքը հաստատելու օրինակ կարող է ծառայել «Միամանթո և Խջեզարե» պոեմի ցանկացած էջ: Եվ սա դեռ 50-ական թթ. վերամշակած տարբերակում: Ինչպես գիտենք, 60—70-ական թվականներին Շիրազն անվերջ վերամշակեց պոեմը՝ գրեթե կրկնապատկելով ծավալը՝ ի հաշիվ հենց հայրենասիրական մտքերի ու գաղափարների արծարծման, որից զգալիորեն փոխվեց նաև երկի գաղափարական բովանդակությունը: Ինչ խոսք, հայրենիքի սերը միշտ էլ հայ բանաստեղծի գերթեման է եղել: Պարզապես Շիրազը այն զարգացնում է նորովի՝ որպես այն սերնդի ներկայացուցիչ, որը չի տեսել դարասկզբի արհավիրքները, բայց ապրում է դրանց ողբերգության մեջ: Սա նոր հոգեբանություն էր մեր գրականության մեջ, հայրենասիրական ստեղծագործության նոր տեսակ, որը պարտադրված էր հայ գրողին, պարտադրված... սեփական ժողովրդի այնքան յուրօրինակ ու ողբերգական ճակատագրով:

Իհարկե, Շիրազի գրական մուտքի տարիներին տակավին ողջ էին և ստեղծագործում էին Չարենցը, Իսահակյանը և ուրիշներ, որոնք արդեն անդրադարձել էին դարասկզբի անցքերին: Սակայն նրանք անձամբ տեսել էին այն ողբերգությունները, որոնց մասին գրում էին: Իսկ Շիրազը պատկերում էր այն, ինչը չէր տեսել, բայց զգում էր սեփական արյան կանչով:

Նախորդ գրողներից ոմանք դարասկզբի ողբերգական տարիներին, երբեմն հուսահատված, «հոգեհանգիստ» էին կարդացել (Հ. Թումանյան) և «արքայական գերեզման դրել» (Վ. Տերյան) այնքան պաշտելի Երկիր Նաիրին: Իսկ մի քանի տարի անց Չարենցը, հարազատ քաղաքի անկման ողբերգությունը պատկերելով

«Երկիր Նաիրի» վեպում, նախ հանգում է այն գաղափարին, որ ոչ մի Մանուկ Աբեղյան այլևս չի կարող ապացուցել, թե Երկիր Նաիրին գոյական է, քանզի այն «հուշ է միայն,— ֆիկցիա, մի.ֆ: — Ուղեղային մորմոք. սրտի հիվանդություն...»: Իսկ հետո, ասես հաշտված հայրենի օրրամի վերջնական կորստի հետ, հայտարարում. «Ոչ մի «Երկիր Նաիրի»— այլ միայն— մարդիկ, որ ապրում են այսօր աշխարհի այն անկյունում, որ կոչվում է Հայաստան, որը հիմա դարձել է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն...»:

30-ական թթ. վերջերին ըստ էության իր ազգային ակունքներից զրկված հայ քնարերգությունը կենդանության նշաններ է ցույց տալիս միայն համաշխարհային երկրորդ պատերազմի և հատկապես հետպատերազմական տարիներին: Հայ զինվորներին ոգեշնչելու նպատակով զրկված բանաստեղծություններում արդեն հնարավորություն է ընձեռվում՝ որպես հերոսական օրինակներ զեղարվեստի էջերում բնակեցնելու թե՛ հայ ժողովրդի անցյալը, թե՛ նրա նշանավոր զորապետերին ու արքաներին: Գրաքննությունը թուլանում է, որովհետև այդ ամենը զուգորդվում և մատուցվում է որպես ֆաշիզմի դեմ մղվող պայքարի ձև, և հայ գրողի մանկրելու և իր ժողովրդի հետ համեմատաբար անկեղծ խոսելու հնարավորությունները մեծանում են: Այդ հնարավորությունները լավագույնս օգտագործողների շարքում էր Հ. Շիրազը, որն արդեն ստանձնել էր իր սերնդի գրական առաջատարի դերը: Նույն տարիներին իրենց բանաստեղծական առաջին խոսքն ասող մյուս պոետները՝ Ս. Կապուտիկյանը, Հ. Սահյանը, Վ. Դավթյանը և ուրիշներ, անվերապահորեն (գոնե սկզբնական շրջանում և հատկապես հայրեններգության բնագավառում) իրենց ստեղծագործություններում կրել են նաև Հ. Շիրազի ազդեցությունը:

Այժմ փորձենք ճշտել Շիրազի հայրենասիրական քնարի նկատելի շերտերը և զարգացման ներքին օրինաչափությունները: Արդեն նշել ենք, որ Շիրազը բացառություն չի կազմել 30-ական թթ. ասպարեզ իջած այն գրողներից, ովքեր ոգևորված ծոներ են շտախլել խորհրդային պետությանը և նրա առաջնորդներին: Ուրիշ հարց, որ այդ ամենը ոմանց երկերում դրսևորվում էր ցածրորակ արվեստին բնորոշ գորշությամբ, իսկ Շիրազի քնարերգության գույները ի սկզբանե հարուստ էին: Թեև դեռևս 1932-ին «Բանվոր» թերթում ցրիչ աշխատելիս, չհաջողված մի փորձ է կատարել տպագրության ուղարկվող նյութերից մեկի մեջ ճանապարհին ինքնագլուխ խցկել «Մասիսականի»՝ Ս. Աղաբաբյանի բնորոշմամբ, տակավին «ամենդ», «հեզ», «անխոս» տողերը<sup>1</sup>:

*Դեմն հասկերի բանակն էր,  
Հնձում էինք միասին,  
Երազելով, որ հունձը  
Հասնի մինչև Մասիսին...*

Սակայն այս տարիներին այդպես էլ չի հաջողվել առանձին, տարբերակված երգեր տպագրել, որոնք նվիրված լինեին հատկապես Հայաստան-հայրենիքին և ոչ թե խորհրդային մեծ պետությանը: Այնպես որ, Շիրազի բուն հայրենասիրական քնարը հիմնականում ձևավորվել է պատերազմական տարիներից սկսած և իր բարձունքին է հասել 50—60-ական թթ.: Ուստի նրա քնարի հայրենասիրական շերտերը պետք է ճշտել 40-ական թվականներին և հետո հրապարակված ստեղծագործությունների քննությամբ: Ավելին, աշխարհայացքային փոփոխությունները, որոնք մենք հակված ենք դիտել որպես ստեղծագործական փուլեր կամ շերտեր, ժամանակային առումով միշտ չէ, որ հստակ սահմանազատված են: Հաճախ նույն շարքում, նույն օրերին զրկված բանաստեղծությունները միանգամայն տարբեր աշխարհայացքային դրսևորումներ ունեն: Ավելացնենք, որ այդ շերտերի ժամանակային սահմանների հստակ ճշգրտմանը խանգարում է նաև այն, որ Շիրազը հազ-

<sup>1</sup> Տե՛ս Ս. Աղաբաբյան, Հովհաննես Շիրազ, Երևան, 1984, էջ 20:

վաղեայ է բանաստեղծությունների տակ նշել գրելու տարեթիվը: Հաճախ էլ առաջին անգամ տպագրվող գործի տակ դրված է տասնամյակներ առաջվա տարեթիվ...

Եվ այնուամենայնիվ, 40-ական և հատկապես 50-ական թթ. սկզբին է, որ Շիրազը յուրովի հայտնագործում է հայոց իրական հայրենիքը՝ իր ամբողջականությամբ մեջ և ոչ թե առաջին աշխարհամարտից հետո քարտեզում գծված սահմաններով: Սա Շիրազի հայրենեզոթյան աշխարհայացքային առաջին շերտն է: Նրա պատանի հերոսի հոռետրական հարցն ու ստացած պատասխանը այլևս կասկած չեն թողնում ընթերցողի մեջ, որ մեր հայրենիքն այն է...

... որ ունի բարձր երկինք,  
... էն, որ ունի աշխարհի թագ՝  
Քանց թագավոր՝ Մասիս ճերմակ...  
... էն, որ ունի Մասիսն ի վար  
Հին-հին բերդեր, վանքեր մթար,  
Որ ավերակ, բայց դեռ դարեր  
Լուռ կաղոթեն երկինքն ի վեր:  
Էն, որ ունի Արագ, Տղմուտ,  
Եվ ափերը մամռոտ ու մութ  
Գերեզմաններն են պապերոտ...

Այս «հայտնագործությունից» էլ սկիզբ է առնում նաև կարոտի ու մորմորի ողբը՝ կորուսյալ հայրենիքի հանդեպ:

Կուզեի նստել մի քարի վրա  
Եվ անվերջ նայել իմ Արարատին,  
Հարբել հայրենի միրաժով նրա  
Եվ հավերժ նայել իմ Արարատին:  
... Եվ նստած լոին այդ քարի վրա՝  
Անդադար նայեմ իմ Արարատին,  
Մինչ շիրիմ դառնա քարն էլ ինձ վրա,  
Եվ մամռած նայեմ իմ Արարատին:

Կամ՝

Դու երազիս պես բարձր ու ամարատ՝  
Ինձ այսքան մոտիկ և այսքան հեռու.  
Հայացքս է սառել, ձյուն դառել վրադ՝  
Ինձ այսքան մոտիկ և այսքան հեռու.

Մի՞թե շատ պիտի մնաս, Արարատ,  
Ինձ այսքան մոտիկ և այսքան հեռու...

Սրանք անափ կարոտի երգեր են, որոնք, սակայն, տակավին զուրկ են պահանջատիրական հնչեղությունից:

Երբ օրոցքում այքս բացի՝ Մասիս սարերն հեռվում տեսա,  
Գերված տեսա ու ես լացի, հայոց ցավերն հեռվում տեսա,  
Ա՛խ, ես մանկուց երազեցի սուրալ ազատ Մասիսն ի վեր,  
Հեռվում այրվող սիրտս բացի, բայց հով սարերն հեռվում տեսա:  
... Նա է կարոտն իմ անսահման՝ քարերն ի վեր, ի վեր Մասիս,  
Թող ամպ ու շանթ գլխիս ռոնան սարերն ի վեր, ի վեր Մասիս  
Կտանեն սիրտս վիրավոր, որպես դրոշ, Մասիսն ի վեր,—  
Թեկուզ մահով՝ կրարձրանամ դարերն ի վեր, ի վեր Մասիս...

Նույն տարիներին Շիրազի ստեղծագործություններում ի հայտ է գալիս նոր քեմա, որը մինչև հեղինակի կյանքի վերջը չի ընդհատվում՝ զուգահեռվելով մյուս քեմաներին: Նման երկերի առանցքը մեր պատմության հերոսական էջերի և հայրենանվեր գործերով ամնահացած անհատների փառաբանումն է ու նրանց արարքների նորովի մեկնաբանումը:

*Երբ նայում եմ լեռնապարհին,  
Սեզ սարերին մեր հայկական,  
Թվում է, թե Տիգրան Մեծի  
Վրաններն են հավերժական:  
... Եվ Մասիսն է գլխին պահում  
Սաղավարտը Տիգրան Մեծի,  
Որ շողում է, ինչպես պահին  
Այն հաղթական վերադարձի...*

Սակայն, կրկնում ենք, նույնիսկ պատմական քեմաներին անդրադառնալիս բանաստեղծը դեռևս կորսված հայրենիքի պահանջատերը չէ: Ոչ թե պահանջատիրության, այլ անգամ հայոց հողերը հայությանը վերադարձնելու ուղիների որոնման քեման տիրապետող է դառնում միայն 50-ական թթ.-ից սկսած՝ հատկապես Ստալինի մահվանից հետո: Սա Շիրազի ստեղծագործության ամենաերկար փուլն է, որն ունի խիստ որոշակիորեն ընդգծված աշխարհայացքային առանձնահատկություն: Այստեղ հարկ է բուն նյութից փոքր-ինչ շեղվելով, անդրադառնալ Շիրազի քնարերգության պսակը կազմող մի քանի պոեմներում զարգացող որոշ տեսակետների, որոնց հիմքի վրա էլ ձևավորվել է աշխարհայացքային նոր փուլը:

40-ականի կեսերից Շիրազը քննում է մարդու, կյանքի, Աստծու, անմահության ու տիեզերքի գաղտնիքներն ու խորհուրդները: 1944 թ. լույս է տեսնում նրա խոհափիլիսոփայական քնարի գլուխգործոցը՝ «Բիբլիական» պոեմը, որտեղ նկատելի է մարդու փառաբանումը, մարդու աստվածացումը, բայց նաև այդ նույն մարդու թերությունների խարազանումն ու ձաղկումը՝ նրան կատարյալ տեսնելու նարեկյան ցանկությամբ: Խոհափիլիսոփայական երկին զուգահեռ ձևավորվում է նաև բանաստեղծի քաղաքացիական քնարը: Ճիշտ է, շատերի մնաց Շիրազն էլ չէր կարող բացելիքաց ըմբոստանալ անարդար իրականության դեմ, բայց լույս էս չէր կարող: Ու քանի որ, դարձյալ Ս. Աղաբաբյանի բնորոշմամբ, Շիրազը «ծնյալ դիվանագետ» էր<sup>2</sup>, ուստի դիմում է փոխաբերական պատկերների և պայմանական սյուժեների: Այսպես, 1943 թ., երբ ոչ ոք չէր հանդգնում թեկուզ կես խոսքով ըմբոստանալ «ժողովուրդների առաջնորդի», նրա ղեկավարած կուսակցության ու պետության գազանաբարտ արարքների դեմ, Շիրազը գրում է իր նշանավոր «Շոթայված մեղեդիներ» պոեմը:

Դեպի իմաստության խորքերը սուզվող բանաստեղծի տողերում սկզբում աննկատ, ապա որոշակիորեն ի հայտ են գալիս քաղաքացիական քնարերգության նոր՝ անկեղծ ու հզոր, դրսևորումները: Ե՛վ մարդ-անհատի, և՛ ողջ ազգերի ողբերգության հիմնական պատճառը և մեծագույն չարիքը բռնությունն է, որի դեմ պայքարը այդուհետ դառնում է Շիրազի քնարերգության հիմնական խնդիրներից մեկը: Պայմանական տարածքում ու ժամանակում հանդես եկող հերոսներից թագավորի կերպարի մեջ ընթերցողը հեշտությամբ ճանաչում է Ստալինին, իսկ նրա դեմ ըմբոստացող հանճարեղ գուսանի կերպարում՝ հենց իրեն՝ Հ. Շիրազին: Պոեմի ընդգծված քաղաքական սյուժեի մեջ անգամ Շիրազը շարունակում է զարգացնել նաև խոհափիլիսոփայականը՝ մարդու, մարդկայնության, չարության, բարության և այլ քեմաներ: Բնության մեջ դաժան են գոյատև ման օրենքները. ուժեղը խժռում

<sup>2</sup> Տե՛ս Ս. Աղաբաբյան, XX դարի հայ գրականության զուգահեռներում, գիրք II, Երևան, 1984, էջ 234:

է քույրին: Բայց դա թելադրված է կենդանական աշխարհի գոյատևման բնագործով: Եվ պոեմի հենց առաջին տողերը դրա նկարագրությունն են.

*Եղնիկի մի ձագ բռնած ցնծագին  
Մարից մայր առյուծն անապատ մտավ,  
Հոտոտեց օդը, կանչեց իր ձագին,  
Սակայն ոչ մի տեղ նրան չգտավ:*

Գազանների մեջ ամենագազանը՝ առյուծն անգամ կարող է հուզվել, լաց լինել և իր ձագի փրկության համար դեմ գնալ ցանկացած վտանգի, էլ ուր մնաց մարդը, որ բանական էակ է՝ արարող, խորհող, որին մեկ այլ առիթով Շիրազն անվանում է **բնության գլուխգործոց**:

Բանաստեղծի կամոք ստեղծվում է մի իրավիճակ, երբ և՛ առյուծը, և՛ մարդը յուրովի պայքարում են, մեկն՝ իր վանդակված ձագի, մյուսը՝ բանտված որդիների փրկության համար: Բայց երկուսն էլ ի վերջո խաբվում են: Առյուծին խաբում է մարդը՝ հանձին հոգեթով գուսանի, իսկ մարդուն՝ նույն գուսանին, որն օգնել էր արքային խաբել ու վանդակել որդեկորույս առյուծին, խաբում է... դարձյալ մարդը՝ բռնակալ արքան: Առյուծին մեղեդիով թովելու և կալանելու դիմաց արքան նախապես խոստանում է ազատ արձակել գուսանի յոթ որդիներին, որոնք արդեն յոթ տարի հեծում էին բանտում:

*Խոսքով են կովել քո դեմ, ո՛վ արքա,  
Քեզ խոսքի կովից ի՞նչ վնաս կգա...*

Սակայն արքան խաբում է գուսանին և առյուծին վանդակելուց հետո հրաժարվում է կալանքից ազատել նրա որդիներին: Հուսահատ հայրը դիմում է ծայրահեղ քայլի. եթե երաժշտությամբ կարելի է դյուբել գազանների արքային, ապա ինչո՞ւ չի կարելի արվեստի կախարհիչ ուժով թովել նաև մարդ-գազանին՝ ստիպելով նրան «արքայի գահից մարդու գահին իջնել»: Եվ ինչ-որ պահի դա նրան հաջողվում է: Մի քանի անգամ երաժշտությամբ կախարդված արքան այնքան է մեղմանում, որ նույնիսկ արտասվում է, հուզվում և հրամայում բաց թողնել գերյալներին: Սակայն դրանք լոկ ակնթարթներ են: Ամեն անգամ կախարհիչ երաժշտության ազդեցությամբ հազիվ մարդացած արքայի մեջ նորից արթնանում է գազանը՝ բռնակալը, և հրամայում է վերստին շղթայել գուսանի ընթոստ որդիներին: Այստեղ է, որ հասունանում է Շիրազի բուն ասելիքը: Գուսանի խոսքերն արդեն խնդրանք չեն, այլ շիկացած ցասման պոթկումներ՝ ուղղված և՛ դաժան արքային, և՛ բոլոր ժամանակների բռնակալներին: Այս հատվածում արդեն պարզորոշ նկատվում է ընթոստ բանաստեղծի և իր իսկ կերտած կերպարի նույնությունը: Քնարական հերոսի շուրթերով խոսողը արդեն ինքը՝ Հ. Շիրազն է, որը, գիտակցելով անգամ, որ իր անձի դեմ էլ հնարավոր են բռնություններ, այնուամենայնիվ որոշում է ճշմարտությունն ասել մինչև վերջ՝ գրեթե առանց քողարկելու պայմանական ու փոխաբերական պատկերների հետևում:

*Ու քանի բանտ կա մի խոսքի ընդդեմ,  
Մի խոսքի ընդդեմ, մի անգեն խոսքի,  
Ես իմ բազուկին օձ կփաթաթեմ  
Եվ կնզովեմ օրենքը բազկի...*

*... Ազատությունն է բլբուլն հազարան,  
Ազատությունը կյանքի ու խոսքի,—  
Իմ երգի թոռներ, փնտրեցեք նրան՝  
Գահեր քանդելով՝ շանթով ձեր բազկի:*

Անճեղ խոսքի համար մարդ բանտոդ արքայի՝ Ստալինի և նրա ահավոր ժամանակների դեմ ըմբոստացման հաջորդ հզոր քայլը, որով և հիմք է դրվում նորօրյա քնարերգության լիարժեք դեմոկրատացմանը, տեղի է ունենում 1953-ին՝ Ստալինի մահվանից անմիջապես հետո, երբ Շիրազը երկնում է «Անճեղության հուշարձան» պոեմը: Ի տարբերություն նախորդ պոեմի՝ այստեղ և՛ ժամանակն է որոշակի, և՛ նկարագրվող դեպքերի տարածքը, և՛ անձինք: Դարձյալ գործ ունենք խոսուն առաջաբանի հետ, որը կարծես ինքնուրույն բանաստեղծություն է, ուր պոետը փորձում է տարիներով կուտակված զայրույթն ու ըմբոստությունը պոռթկալ, թեկուզ դրա համար ստիպված լինի վճարել սեփական կյանքով:

*Ո՛վ գուշակ, ասացիր չեն գալու ինձ վրա՝  
Ընդդեմ են քաղցրախոս քնարիս,—  
Թե ահից չեն գալու՝ չեն լալու ինձ վրա՝  
Լոկ հողն է սգալու սմարիս:*

*Թող չգա՛ն, թող ինձ էլ չհիշեն,  
Ո՞ւմից են ես ավել, էլ ո՞ւմից,  
Երբ անհայր թաղվեցին հայտնիներն իմ անքեն՝  
Ափշոփված այն գաղտնի սամումից:*

*Ումի՞ց են ավել, երբ բյուրեր թաղվեցին  
Երեսույթ թվին ահավոր,  
Երբ մարդկանց փոխարեն ամպերը գոռացին,  
Սգացին պապանձված սար ու ձոր:*

Շիրազը մանրամասնորեն պատկերում է այն զարհուրելի մթնոլորտը, որ տիրում էր անհատի պաշտամունքի տարիներին...

*Եվ ամեն մի գիշեր ահահար ամեն տուն,  
Ամեն սիրտ, ամեն դուռ կսպասեր,  
Թե հիմա կմտնեն, կտանեն իր որդուն,  
Իր հորը, կամ իրեն կտանեն...*

*Կտանեն, կհանեն եղունգներն, աչքերը,  
Որ ասի՝ «Իրավ, թույն են երկրին»,  
Ու մեռան խիղճ ու սեր, ու դառավ երկիրը  
Կասկածի ծով կծիկ մի մթին:*

Այս ահազարհուր պատկերների ֆոնի վրա հատկապես խորհրդանշական են այն տողերը, ուր Շիրազը անդրադառնում է հայ նորագույն քնարերգության ամենահզոր անհատականության՝ Ե. Չարենցի հայտնի բանաստեղծությանն ու այդ հանճարեղ նաիրցու ողբերգական անկումին:

*Եվ հիմա էլ ոչ մի գանգրահեր պատանի  
Չի գտնի գերեզմանն այն կորած,  
Ուր պոետն է մեռյալ մոռչում կենդանի  
Նոցա հետ, որ ընկան վախվորած...*

Բայց ինչպես նախորդ պոեմում, այստեղ էլ Շիրազը զուտ դեպքերի նկարագրողը չէ: Փաստի բանաստեղծական վերարտադրությունից հետո նա փորձում է ճշտել այդ արհավիրքների արմատը. «...մեղավորը մե՞կն էր, թե՞ սաղրանքն ահեղ...»:



*Օ՛, խոսի՛ր, որպես լուռ Արարատն իմ գերի,  
Երեսույնյո՞թ թվի հուշարձան,  
Թող հառնեն նահատակ հազարներն ազգերի՛  
Ծով էին՝ կաթիլին զոհ դարձան:*

Եվ դարձյալ իրեն հատուկ փիլիսոփայական լայնախոհությամբ հանգում է այն եզրակացության, որ ամեն ինչի մեղավորը մարդն է՝ իր ընչաքաղցությամբ, փոքրոգությամբ, աթոռապաշտությամբ, անկատարությամբ...

*Բայց ի՞նչ էր կաթիլը, թե ծովը մոռչար,  
Թե մարդը եղբայր լիներ մարդուն,  
Թե մարդը վեր մնար աթոռից ու մթար  
Չմորթեր իր խղճի աստծուն:*

Քաղաքական պոեզիայի այսպիսի ուժգնություն Չարենցից հետո, թերևս, մեր գրականության մեջ չէր դրսևորվել: Շիրազը կոչ էր անում, հիշելով անցյալի տխուր դասերը, այլևս երբեք չվերադառնալ այդ օրերին: Սեփական օրինակով կարծես բաց էր անում նաև իր սերնդակից բանաստեղծների՝ տարիներով փակ լեզուն, որպեսզի գրականությունը վերադառնար իր բնական հունին, որպեսզի ծառայեր իր բուն կոչմանը՝ մարդագիտությանը:

Բարեբախտաբար, Ստալինի մահվանից հետո, կապված խրուչչովյան դեմոկրատիայի և գրաքննության թուլացման հետ, որոշ հնարավորություն է տրվում ազատ խոսքին, որն այնպես բանտված էր տասնամյակներով, բայց նաև կուտակված էր արվեստագետներից շատերի հոգում ու պոռթկման ելք էր փնտրում: Արվեստագետների, որոնք հզոր կայսրության «անսխալական» գաղափարախոսությամբ պարտադրված երկերի համար նախ արժանանում էին պետական ու կուսակցական պարգևների ու մրցանակների, և «քաղաքական հուսալիության» որոշակի պաշար ապահովելուց հետո միայն, փորձում էին «մեծ ու հզոր» հայրենիքից բացի տողեր մվիրել նաև իրենց «փոքրիկ»՝ իսկական հայրենիքին՝ այն էլ հիմնականում գովերգելով նրա խորհրդային երջանիկ ներկան:

Անդրադառնալով այդ տարիներին՝ Շիրազը հետագայում գրում է.

*Իմ սխալներն իմ դարինն են, ի՛նքն չեն,  
Մշտասխալ աշխարհինն են, ի՛նքն չեն,—  
Ինձ ցավ տալով՝ իմ դարն իրեն միշտ ներեց,  
Բախտ ու ծիծաղ միշտ չարինն են, ի՛նքն չեն:*

Մի այլ քառատողում, դարձյալ հայացք գցելով իր անցած ուղուն, խոստովանում է.

*Միշտ իմ գլխին դարս կանգնել՝ աներևույթ թրի պես,  
Ինձ իմ ճամփից հանել կուզեր՝ հունը փոխած ջրի պես,—  
Բայց, ա՛խ, սև ջուր կդառնային հուր գինիներն իմ երգի՛  
Թե իր խոսքը չասեր երգս՝ Սասնա Դավթի թրի պես...*

Իրոք, ինչպես չկա իսկական արվեստագետ՝ առանց ազգային պատկանելության, այնպես էլ չկա ազգային մշակույթ՝ առանց սեփական ժողովրդի ճակատագրի, նրա ազնիվ մղումների ու երազների արտացոլման:

Այսպես, նույնիսկ կոմունիստական ստեղծագործություններով առավելագույնս աչքի ընկած Նաիրի Ջարյանը, որը մեծ հռչակ էր վայելում «Հացավան», «Ռուշանի քարափը» և մնամատիպ այլ գործերով, որ հողվածներ էր գրում «ազգայնամուլ» հայ գրողների դեմ՝ մեղադրելով նրանց սոցիալիզմի, կոմունիզմի, ին-

տերնացիոնալիզմի գաղափարներին դավաճանելու մեջ, այնուամենայնիվ, գրել է մի շարք ընտիր հայրենասիրական գործեր («Արա Գեղեցիկ և Շամիրամ», «Հայոց լեզու» և այլն), որոնք հիրավի մասն են կազմում այն իսկական հայրենեղբայրյան, որ դանդաղ, բայց կայուն ամրապնդվում էր ու որակ կազմում համատարած անորակ գրական արտադրանքի մեջ, որի հեղինակներից շատերի կյանքը ավելի երկար տևեց, քան իրենց ստեղծագործություններինը:

Այս հարկադիր գոյուշավորության պայմաններում Հ. Շիրազն, ի տարբերություն ժամանակակիցներից շատերի, հատկապես 30-ական թվականներից սկսած, իր երկերում անթաքույց ազատություն էր տալիս կորսված հայրենիքի ու նրա պահանջատիրության գաղափարներին: Բայց նույնիսկ այս դեպքում հարկ է չմոռանալ, որ Շիրազը և ս իր դարաշրջանի զավակն էր՝ ազգերի եղբայրությունը, որպես միասնական ընտանիքում ապրելու գոյաձև ընդունող անձ և բանաստեղծ: Եվ նրա ստեղծագործությունների երկրորդ փուլը, որն ամենաերկարատևն է և, ինչպես նշել ենք, բնորոշվում է կորսված հայրենիքի փրկության ուղիների բարձրաձայն ուրուումներով, հազեցած է հենց ազգերի ու ժողովուրդների բարեկամության գաղափարներով ու այդ բարեկամության միջոցով իր նվիրական երազանքներին հասնելու ռոմանտիկ հավատով: Հետաքրքիր է նկատել, որ Շիրազը և ս, թեև պատմական թեմաներով գրված ստեղծագործություններում փառաբանում է այն հերոսներին, որոնք բազկի ուժով են պաշտպանել ու նվաճել հայրենիքի ազատությունն ու անկախությունը, ներկա կյանքին անդրադառնալիս միանշանակ դեմ է արյան ու սրի:

*Ազգ իմ, անսա և օղ արա պատգամներս ականջիդ,  
Սև ամպի տակ մի թող Մասիսն ու Վանա ծովն իմ վճիտ,  
Բայց ոչ արյամբ... քանզի, ազգ իմ, արյուն շատ ես տեսել դու...  
... Արյուն պետք չէ... անեծք արնոտ յաթաղանին ու խանին,  
Թուրդ կախիր և հույսդ դիր, ազգ իմ, կլոր սեղանին,  
Խելքի կգա աշխարհի խիղճն՝ այնպես քնած չի մնա,  
Ինչպես մոր կուրծքն ուզող մանկիկ՝ նա էլ մի օր կարթնանա,  
Միշտ չեն մնա հայոց ծովերն ու լեռները անդնդում,  
Լաց կլինի աշխարհի խիղճն, ինչպես Մասիսն իր բանտում,  
Բայց սրբելով քո արցունքն էլ՝ մայր խիղճն այնպես կճշա՝ ...  
... Որ փոթորկող նրա շնչից ելած՝ այս կողմ կքոչի  
Քո վիթխարի Մասիսն անգամ, որպես մի լույս աղավնի:—*

Մարդուն, մարդու և ազգերի կատարելությանը այնքան հավատացող Շիրազը, ինչպես տեսնում ենք, հայրենիքի փրկությունը կապում է «աշխարհի խղճի» և պետությունների արդար դիվանագիտության՝ «կլոր սեղանի» հետ: Մեջբերված տողերի ոգով ու բովանդակությամբ գրված բանաստեղծությունները գերակշիռ մասն են կազմում Շիրազի հայրենեղբայրյան:

Ճիշտ է, երբեմն վախի ու կասկածի պես մի բան սողոսկում է բանաստեղծի հոգին, սակայն ազգերի խղճի հանդեպ գրեթե մանկական հավատը դուրս է մղում ոչ խաղաղ ճանապարհով կորսված հայրենիքը հետ ստանալու ակնթարթային գայթակղությունը:

*Ինչպե՞ս լռեմ՝ այսքան մոտ եմ Մասիսին,  
Այսքան մոտ եմ, բայց կարոտ եմ Մասիսին:  
Խաղաղություն, տե՛ս քեզ ինչքան եմ պաշտում,  
Որ չեմ գոռում, թե վառող եմ... Մասիսին:*

Այո, երեսայի միամտությամբ Շիրազը հավատում է մարդկության խղճին: Եվ հայրենանվեր տողերի համար իրեն ազգայնամտության մեջ մեղադրող իրական (երբեմն էլ ենթադրյալ) հակառակորդներին իր մտքերն առավել պարզելու համար, իրեն

այնքան բնորոշ քնարականությունն անտեսած, գրեթե հռետորական ոճով գրում է.

*Ես չեմ ասում, թե իմ ազգը վարերում է իմ սրտի,  
Իսկ մնացած ազգերն՝ անգին քարերում են իմ սրտի,—  
Ի՞նչ թաքցնեն, ազգերինն են սրտիս դաշտերն անսահման,  
Ազգի՛ս գահը՝ սրտիս սրտում՝ սարերում է իմ սրտի:*

Եվ ի՞նչ ազգայնամոլության մասին է խոսքը, երբ իր պաշտած Մասիսը տեսնելու հույսը երբեմն կորցրած բանաստեղծը պարզապես կտակում է.

*Ինձ էլ բերեք Մասսի ձյունից՝ իմ հուշերի արցունքով,  
Երբ կազատեք, լուրն ինձ բերեք ո՛չ թմբուկով, ո՛չ շուքով:  
Քանզի սիրտս շատ է մաշվել Արարատիս կարոտից,—  
Որ չմեռնեն խնդությունից, լուրն ինձ բերեք... շշուկով:*

Շիրազյան հայրենեզության այս շերտի հանրագումարը «Հայոց դանթեական» պոեմն է, որի ստեղծման և վերամշակումների վրա հեղինակն աշխատել է ավելի քան չորս տասնամյակ՝ 1941-ից մինչև իր կյանքի վերջը<sup>3</sup>: 8000 տողանոց այս քերթվածքի ամեն մի էջ, ամեն մի հատված ողբ է՝ 1915 թ. եղեռնի անմեղ մահատակների: Սակայն այդ ողբը ունի նաև ընդգծված բողոքի շեշտ, բողոք՝ հզոր պետությունների, ազգերի, ժողովուրդների ու մարդկության անտարբերության դեմ, որոնց աչքի առաջ կատարվեց մարդկության պատմության մեջ ամենավայրագ ու մեծածավալ ցեղասպանությունը:

*Ես այս դարի սրտին պիտի  
Փորագրեմ, որպես վերքեր,  
Որպես հետքերն հայոց վշտի՝  
Երեք միլիոն հայ անուններ,  
Որպես մեղքերն հողագնդի,  
Երեք միլիոն անմեղ զոհեր,  
Որ մորթվեցին յաթաղանով  
Քար մարդկության աչքի առաջ...*

Ողբի ու բողոքի իրատես ու ցասկոտ տողերին զուգահեռ՝ Շիրազը շարունակում է բախել ազգերի ու մարդկության քնած խղճի դարպասները, որպեսզի առանց արյան՝ «կլոր սեղանի» շուրջ, լուծվի հայոց հարցը, և հայոց հայրենիքը վերադարձվի իր իրական տերերին:

«... վե՛ր կացեք, ո՛վ մե՛ծ ու փոքր ազգ ու ցեղերի մե՛ծ ու փոքր որդիք, գնանք ի մի ոգիացած՝ ամեն սրտով մեկ՝ աշխարհով մեկ արթնացնելու խիղճը ... ես վերցնելու հողերն իմ հայոց, Մասիսն իմ գերի»<sup>4</sup>:

Ըիշտ է, պոեմում քիչ չեն վրիժառության կոչերը, օրինակ՝

*Ով դուք՝ վկաներ հավերժավրեժ հայոց եղեռնի,  
Ջարթեք, որ պատժանքն այս անգույգ մեղքի կոկորդից թոճի,  
Հատուցման արժիվն իր ծեռ վանդակից ի լույս սլանա...*

սակայն դրանք ավելի շատ «բարոյական վրեժխնդրության» պոռթկումներ են և ոչ թե՛ զենքի ու արյան.

<sup>3</sup> Տե՛ս «Հայոց դանթեականը» պոեմի ամբողջական հրատարակության խմբագիր Հարություն Ֆելքյանի խոսքը «Խմբագրի կողմից» վերնագրով, (Հ. Շիրազ, Հայոց դանթեականը, Երևան, 1990, էջ 375—380):

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 30:

*Մորթված արգանդից մանուկը կելնի՝  
Չի թողնի իր հայ Վանա ծովն անտեր,  
Իր Մասիս լեռներն անտեր չի թողնի,  
Կհասնի հայ ցեղն իր հայ Մասիսին...*

Եթե հաշվի առնենք, որ այս պոեմի ամբողջական տարբերակը Շիրազը հրատարակության է հանձնել բառացիորեն իր կյանքի վերջին և նույնիսկ չի հասցրել տեսնել այն տպագիր վիճակում, ապա կարելի է եզրակացնել, որ շիրազյան հայրենապատումի աշխարհայացքային այս շերտը ոչ միայն ամենածավալունն ու ամենաընդգրկունն է, այլև ամենատիպականը նրա քնարերգության մեջ:

Բնականաբար, ստույգ դժվար է ասել, թե երբ են նշված գաղափարները տեղի տալիս միամիտ հավատի երկարատև քնից ասես արթնացած և կեղծ հույսերից ձերբազատված բանաստեղծի արդեն վերջին՝ իրատես մտորումներին կամ զուգահեռվելով նախորդ շերտին՝ ստեղծում աշխարհայացքային «երկիշխանություն»: Երրորդ փուլում (մոտավորապես 60-ական թվականների կեսերին) Շիրազը գրում է մի շարք բանաստեղծություններ, որոնց զգալի մասը երկար տարիներ անտիպմնաց, որովհետև ուներ ոչ միայն ընդգծված բողոքի, այլև ըմբոստացման և մարտակոչի շեշտ:

*Վշտի մի կնճիռ չկա արևմուտքի ճակատին,—  
Ինչո՞վ ամպեմ, որ կայծակեն սուլթանների ճակատին,  
Կես դար անցավ, բայց մահիկը դեռ չի հանվել կախաղան,  
Մասիս, գեթ մի քար տուր՝ խփեն արևմուտքի ճակատին...*

Ստեղծագործական այս շերտի առանցքն են կազմում պատմական թեմաներով գրված երկերը, որոնց մեջ հերոսական դրվագներին զուգահեռ հնչում են ազատության և անկախության կոչեր՝ մեկ սիրված հերոսների՝ Հայկ Նահապետի, Տիգրան Մեծի, Վարդան Մամիկոնյանի, մեկ հենց իր՝ բանաստեղծի անունից: Անշուշտ, պատմական թեմաներին անդրադառնալը Շիրազի համար երբեք ինքնանպատակ չի եղել, սակայն երբեք պատմության անդրադարձը ներկային՝ կորված հայրենիքի ազատագրման գաղափարին, ծառայեցնելու միտումը այդքան որոշակի, անսքող ու գրեթե մերկապարանոց չի եղել: Նմանօրինակ բանաստեղծությունները շատ են: Բերենք մի քանի պատառիկներ.

*Ով Մասնա քաջեր, քիչ էլ դիմացեք,  
Աստված չգարթնի՝ կգարթնի ազգը,  
Մեկով կյոթնի իմ հույսի հասկը...*

*Հազար սարեր կորցրածը՝ սար ու ձորը ո՞նց մոռանա,  
Իմ դարում էլ ես իմ հայոց Ավարայրի դարն եմ պաշտում:*

*Կույ է եկել Հայաստանը Արագածի լանջին,  
Եվ կսպասե Արարատը Մամիկոնյան քաջին:*

*Յոթերորդ ծուռն հայ Մասունի,  
Միակ շիտակն հայ ցասումի,  
Կանգ չի առնում ոչ մի վայրկյան  
Իդձ— Անդրանիկն հույսով Հայկյան,  
Խթանում է ձին մարմարե,  
Որպես կովի մի մարգարե ...*

60-ական թվականներից մինչև կյանքի վերջը Շիրազը սկսում է նաև շարու-

նակաբար վերամշակել ու վերահրատարակել նախորդ տասնամյակներում գրած ստեղծագործությունների մեծ մասը՝ հարստացնելով դրանք հայրենասիրության ու հայրենիքի փրկության համար պայքարի գաղափարներով: Մեր կարծիքով՝ այդ վերամշակումների արդյունքում շատ գործեր զրկվել են իրենց նախնական թարմությունից ու քնարականությունից՝ դառնալով առավել քաղաքականացված և հռետորական, իսկ ասելիքի տեսակետից՝ միօրինակ ու կրկնվող: Շիրազը գիտակցաբար չէր խուսափում այդ կրկնություններից, քանզի իր խնդիրը նոր ու վերջնական ասելիքը որպես պատգամ հարազատ ժողովրդին հասցնելն էր: Իսկ այդ պատգամը արդեն չէր սահմանափակվում նույնիսկ ըմբոստ պահանջատիրությամբ: Ուշուցումով, բայց հաստատապես նա հասել էր այն ամենակարևորին, որը հայրենաբաղձ բանաստեղծի մտքի երկարատև դեզերումների տրամաբանական վախճանը պետք է լիներ: Նրան, որի մասին տասնամյակներ առաջ արդեն Չարենցը գրել էր. «Ո՛վ հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»:

*Յոթը սիրտ կա իմ սրտիս մեջ, յոթն էլ մի բան են տենչում,  
Յոթն էլ դեպի Մասիս տանող կյանքիս ճամփան են տենչում,  
Յոթը հարյուր հազար սիրտ կա ամեն մի հայ սրտի մեջ,  
Ողջը մի սիրտ— Շիրազ դառել՝ Մեծ Հայաստանն են տենչում:*

Վերջապես, Շիրազի տողերում հնչում է նաև արդար վրեժի ու հատուցման պղնձաձայն շեփորը: Թվում է՝ տասնամյակները ոչինչ չեն փոխել դարասկզբի և ներկա հայ իրականության մեջ: Թվում է՝ Շիրազը ևս ժամանակակիցն է հայոց մեծ եղեռնի ականատես ու նահատակ բանաստեղծների՝ Սիամանթոյի, Վարուժանի, Ռուբեն Սևակի, մյուսների... Նրանց հետ, նրանց կողքին «Եղեգնյա գրչով երգում է վրեժ», և եղեգնյա գրչից դարձյալ «ելանում է բոց...»:

*Ես կմոռանամ իմ աստղծուն էլ,—  
Բայց երբեք մոռունչն հայոց ցասումի,  
Սպասումն արդեն գլխիս է ձյունել,  
Բայց կգա, գիտեմ, դարն հատուցումի...*

Աշխարհայացքային երրորդ շերտի ամենաբնորոշ ստեղծագործությունը, որ վերնագրված է «Ողբ Ղարաբաղի», արդեն որքան ողբ, նույնքան էլ ազատության, պայքարի կոչ է, հայրենիքը ոչ միայն խոսքով, այլև բազկի ուժով ու սեփական արյամբ ոսոխից ազատագրելու կոչ: Ղարաբաղը՝ կորսված հայրենիքի փոքրիկ մի պատառը, Շիրազի կարծիքով, արծիվն է հայոց՝ բախտի դաժան քնահաճույքով օտար ծովի վրա հայտնված, որին սպառնում է արքայական վեհանիստ հպարտությունը կորցնելու և օտար ջրերի ճայ դառնալու վտանգը:

*Քեզ կույ կտան մուղամները, քառո՞ կառնեն, վա՛յ Ղարաբաղ....*

Շիրազի «ողբը» այս անգամ քուրա է միայն, ուր պետք է կոփվի հատուցման սուրը՝ զավթիչներից հետ խլելու հայրենի եզերքները, որոնց հավաքական խորհրդրդանիչը այս դեպքում Արցախն է: 1962-ին գրված այս ստեղծագործությունը, թեպետ անտիպ, բայց հայտնի էր ժողովրդին ու 1965 թ. ապրիլի 24-ի համազգային պոթթկումի ամենակրկնվող բանախոսություններից մեկն էր:

*Դու չես գատվել, խլել են քեզ, որ մոռանաս երգերն հայոց,  
Չորերիդ պես խորացել են քո կարոտից վերքերն հայոց.  
Ա՛խ, ե՛րբ պիտի լեռներիդ պես վեր բռունցքվեն ձեռքերն հայոց,  
Որ չդառնա հայոց արծիվն՝ օտար ծովին ճայ, Ղարաբաղ...*

Յավոք, Շիրազը չհասցրեց տեսնել, թե ինչպես, գրեթե քառորդ դար անց՝ 1988-ին՝ իր վերջին պատգամին հարազատ՝ հարյուրհազարավոր հայորդիների ձեռքեր դարձյալ վեր բռունցքվեցին՝ սկիզբ դնելով հայոց նորօրյա ազատամարտին՝ Արցախի ազատագրմանը: Բայց նրա հանճարեղ միտքն ու հոգին տասնամյակներ անաջ արդեն տեսել էին ու կերտել այդ պահը:

Եվ ոչ միայն այդ պահը:

Մարմնավոր հայրենիքի գրավականը նախ հոգևոր հայրենիքն է, որին երբեք չեն լքել հայոց քերթության տաճարի իսկական քուրմերը. նրանց հավատի ու պատգամի շնորհիվ՝ նաև ինքը՝ ժողովուրդը, որը երբեք չի կորցրել հավատը այն օրվա հանդեպ, երբ՝

*... հայ գրերը ոչ թե ավազին,  
Այլ Արարատի ճակատին կգրենք...*

**А. А. Тер-Мавсян - Мировоззренческие пласты патриотической лиры Ованеса Шираза. -**

В статье делается попытка определить ту роль, которую сыграла современная армянская литература 60-80 гг. в формировании народно-освободительных идей. Изучая патриотические произведения одного из ведущих поэтов этого десятилетия О. Шираза, автор определил три основных направления в его мировоззрении, характерных также для произведений других поэтов этого поколения.

Этими направлениями являются:

1. ностальгическая песня по потерянной родине;
2. произведения, пронизанные надеждой - вернуть утраченные земли, уповая на совесть и мораль человечества;
3. стихи, выражающие чувства решимости отвоевать собственными силами, путем народно-освободительной борьбы потерянные в начале века территории.